



ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Որոշում թիվ 14

24-ը Սեպտեմբերի 2016թ.

գ. Վարդաձոր

Վարդաձոր գյուղի Ալաշկերտի փողոց թիվ 15 հասցեի 05-084-0016-0009 ծածկագրով հողամասի և շենք շինությունների նկատմամբ Ռազմիկ Աղվանի Շեկոյանի ընտանիքի գույքային իրավունքները վերականգնելու մասին:

Հաշվի առնելով, որ շինությունը կառուցվել է մինչև 2001թ., հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերի պահանջներին, ընդգրկված է հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նշված տարածքներում: Դեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ 2008թ. հունիսի 10-ի ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով.

Որոշում են՝

1. Վերականգնել վերը նշված հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Ռազմիկ Աղվանի Շեկոյանի ծնվ.1947թ. Սվետիկ Կարապետի Շեկոյանի ծնվ.1954թ., Մասուն Ռազմիկի Շեկոյանի ծնվ.1973թ. և Մխիթար Ռազմիկի Շեկոյանի հողօգտագործման իրավունքը, շինության զբաղեցրած տարածքի և սպասարկման համար անհրաժեշտ 0,34 հա հողամասի և դրա վրա կառուցված շենք շինությունների՝ նկատմամբ:

2. Շենք շինությունների մակերեսները ենթակա չեն ճշտման ԱԳԿ Մարտունու տարածքային ստորաբաժանման կողմից:


3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի քաղաքաշինության մասնագետի կողմից տրված հատակագծով:

4. Շինությանը տրամադրել Ալաշկերտի փողոց թիվ 15 հասցեն:

5. Առաջարկել ԱԳԿ Գեղարքունիքի տարածքային ստորաբաժանմանը գրանցել Ռազմիկ Աղվանի Շեկոյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և շենք շինությունների նկատմամբ և տրամադրել սեփականության իրավունքի գրանցման վկայական:

6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վարդաձորի գյուղապետ՝



Ռ. Սիրականյան